

գաւառաց, յոգնապատիւ եւ գերահռչակ պատուով մեծարեալ, պետականին ժամանելոյ գահիդ
 Հռոմայ, Տեառնդ Գլէմէնդոսի, երիցս երջանիկ
 եւ րիւշիւրիւն չայրապետիդ: 20

Մեր նուաստ ծառայք Քրիստոսի, Տէր
 Աղեքսանդր ամենայն Հայոց կաթողիկոս, ի գահս
 շողաշորդ եւ Աստուածակէջ աթուոյս Էջմիածնի,
 եւ որք ընդ ինեւ ժառանգաւորք սրբութեանն
 ուխտի, եպիսկոպոսք, քահանայք, վարդապետք, 25
 եւ ամենայն կղերք էլիւնցոյ, ողջոյն սիրոյ եւ
 սրբութեան մատուցանեմք վսեմախոհ սրբութեանդ
 եւ որոց ընդ հովանեաւ քոյսցդ թեւոց եկեղեցա-
 կանաց, միանգամայն եւ աշխարհականաց, խնդալ
 ի Տէր, ամէն: 30

Եւ ընդ Աստուածապարգեւ եւ Քրիստոսա-
 նուէր ողջունիս, ծանուցումն եւ յայտարարոմն ին-
 առնեմք փառաւոր տէրութեանդ քոյ, զի թէպէտ
 եւ մեք, վերջացեալք գտանիմք յայտ ժամանակի
 ի մարմնաւոր իշխանութենէ, սակայն զձերն տեսա- 35
 նելով եւ լսելով աստուծոմն ինքնին գերադարձոմն
 ինքն, զուարճացեալ բերկրիմք ի սիրտ եւ ի հոգի,
 եւ գոհութիւն անբար, եւ բար օրհնութիւն մա-
 տուցանեմք ամենաթագաւորին Քրիստոսի Աստու-
 ծոյ մերոյ, որով թագաւորք թագաւորեն, հզօրք 40
 գրեն զարդարութիւն՝ ըստ իմաստնոյն բանի, եւ
 խնդրեմք զի զնոյն միշտ՝ ամենայն ժամանակի
 արագայիտ ասոց խաղաղութեամբ եւ անդդուելի
 կենսո՛ հաստատուն պահեսցէ մինչեւ ի կտար եւ ի
 սպառումն յաւիտենիս այսորիկ, ի փառս եւ ի գո- 45
 վեստ Աստուծոյ ինքնին իւրոյ, յուրախու-
 թիւն եւ ի պարծանս ամենայն քրիստոնէից, ամէն:

Եւ արդ՝ արտագրեմք եւ զայս առաջի գե-
 րիշխանական մեծութեան ձերոյ, զի ի բնուստ
 անտուստ ի սկզբանէ՝ այն է սովորութիւն նախա- 50
 գահութեան գերագունութեանցդ, վարդապետս
 եւ քարոզս առաքել ի չորեքժագեան տիեզերս,